Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն N 16

ՓՄՁ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

20.04.2023թ. ժ. 13:00 ՀՀ էկոնոմիկայի նախարարության կոլեգիայի դահլիճ

Քաղաք Երևան

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ՝

ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

1.	Արամ Սալաթյան	«Ինժեներական Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
2.	Գոռ Մելիքյան	«Ինժեներական Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
3.	Արկադի Սահակյան	«Առաջատար տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն» հասարակական կազմակերպություն
4.	Արամ Խաչատրյան	«Ձեռնարկությունների ինկուբատոր» հիմնադրամ
5.	Գուրգեն Գրիգորյան	«Կառուցապատողների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
6.	Սարգիս Ասատրյանց	«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամ
7.	Հայկազ Ֆանյան	«Սոցիալ-Տնտեսական ուսումնասիրությունների հայկական կենտրոն» հիմնադրամ

8.	Լիլիթ Գևորգյան	«Ամերիկայի Առևտրի Պալատը Հայաստանում» հասարակական կազմակերպություն
9.	Նիկա Մանուկովա	«Համաշխարհային ազատ տնտեսական գոտիների կազմակերպություն» ոչ առևտրային ասոցիացիա
10.	Հակոբ Ավագյան	«Փոքր և միջին ձեռնարկատիրության համագործակցության ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
11.	Կարեն Զաքարյան	«Ֆինարմ» ֆինանսական շուկայի մասնակիցների ասոցիացիա» հասարակական կազմակերպություն
	Հրավիրված անձինք	
12.	Արթուր Մանուկյան	Պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
13.	Լեռնիկ Հարությունյան	Պետական եկամուտների կոմիտեի վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչություն
14.	Արման Մնացականյան	Պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ
15.	Օրի Ալավերդյան	Ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության պետ
16.	Էդուարդ Բաղալյան	«Քաղաքացի-հարկատու-բիզնես» իրավապաշտպան կազմակերպություն

17. Գևորգ Հայրապետյան — Արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալության պետ

Քարտուղարության անդամներ

18. Հովսեփ Պատվականյան — ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ղեկավար

19. Հայկ Մալխասյան — ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու

20. Դավիթ Աղաջանյան — ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ

21. Ռուբեն Սարուխանյան — ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի տնտեսագետ, տնտեսագետ

22. Հասմիկ Սողոմոնյան — ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի հանրային կապերի պատասխանատու

23. Վիկտորիա Կամարյան — ՎՋԵԲ Հայաստանի Ներդրումային խորհրդի գրասենյակի համակարգող

Նիստի բացմանը ողջույնի խոսքով հանդես եկավ Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը:

ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

Հարց 1. Շրջանառության հարկ վճարողների համար ապրանքների ձեռք բերման գործարքների պարտադիր փաստաթղթավորման պահանջ սահմանող օրենսդրական նախագիծ:

Զեկուցող՝ ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյան

Հարց 2. 24 միլիոն դրամի շեմը գերազանցող ՀԴՄ կիրառողների համար տեսանկարահանման պահանջ, խախտումները բացահայտելու նպատակով գաղտնի տեսանկարահանման և հսկիչ գնումն այլ անձի միջոցով իրականացնելու հիմքեր սահմանող իրավական ակտերի նախագծեր:

Զեկուցող՝ ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյան

Հարց 3. Միկրոձեռնարկատիրության համակարգի գործունեության պայմանները վատթարացնող օրենք:

Հարց 4. Անհատ ձեռնարկատերերի համար անալիտիկ հաշվառման պահանջ սահմանող իրավական ակտի նախագիծ:

Զեկուցող՝ ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի ներկայացուցիչ Հակոբ Ավագյան

ՔՆՆԱՐԿՎԵՑ

Հարց 1. ՎԶԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ տնտեսագետ Դավիթ Աղաջանյանի զեկուցմամբ ներկայացվեց շրջանառության հարկ վճարողների համար ապրանքների ձեռք բերման գործարքների պարտադիր փաստաթղթավորման պահանջ սահմանող օրենսդրական նախագծի հետ կապված մտահոգությունները՝ կապված հարկային ստուգումների ժամանակ փաստաթղթերի և իրերի առգրավման ընթացակարգերն ու հետևանքների, գործի հետ կապ չունեցող փաստաթղթերի և իրերի առգրավման և այլնի հետ: Նախագծով առաջարկվում է ՀՀ հարկային օրենսգրքի 263-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետն ուժը կորցրած ճանաչել, ինչի արդյունքում շրջանառության

հարկ վճարողները առանց համապատասխան փաստաթղթավորման ձեռքբերումներ կատարելիս կվճարեն 20 տոկոս եկամտային հարկ, ինչպես հարկման ընդհանուր համակարգում գործող տնտեսվարողները:

Մասնավորապես, նախագծով առաջարկվում է որպես թեմատիկ ստուգման տեսակ սահմանել շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման ճշտության ստուգումը՝ նախատեսելով, որ

- ստուգման հանձնարարագիրը կարող է հրապարակվել ոչ ավելի, քան յուրաքանչյուր հարկային տարվա ընթացքում մեկ անգամ,

- ստուգումն իրականացվում է հարկային մարմնի պաշտոնատար անձանց կողմից ընտրված ապրանքների գծով:

Շրջանառության հարկ վճարողների մոտ ապրանքների ձեռք բերման գործարքների փաստաթղթավորման կարգի խախտման փաստը հարկային մարմնի կողմից իրականացվող համալիր կամ թեմատիկ հարկային ստուգումների ընթացքում արձանագրվելու դեպքում հարկ վճարողից գանձվում է հարկ վճարողներին վճարվող եկամուտների մասով եկամտային հարկ՝ Օրենսգրքի 150-րդ հոդվածի 13-րդ մասին համապատասխան:

Դավիթ Աղաջանյանը նշեց, որ ի սկզբանե շրջանառության հարկի համակարգը ստեղծվել է որպես փոքր տնտեսվարողների համար ավելի պարզ ու ցածր հարկային բեռ ենթադրող համակարգ: Դեռևս 2019-ը թվականից քննարկումներ են իրականացվում շրջանառության հարկի բարձրացման մասով: ՀՀ վարչապետի որոշմամբ 2020 թվականին հաստատվեց հարկային քաղաքականության ճեղքի կրճատմանն ուղղված միջոցառումները, որտեղ ամրագրեց, որ շրջանառության հարկի համակարգը չպետք է ընկալվի որպես նվազ հարկային բեռով արտոնյալ համակարգ և շրջանառության հարկի դրույքաչափը պետք է բարձրացվի, սակայն խոսք չկար փաստաթղթաշրջանառության բեռի ավելացման վերաբերյալ: Համաձայն նշված որոշման, 2021 թվականին պետք է փոխվեր համակարգը, այն չենթարկվեց փոփոխության: Փոխարենը 2022 թվականին ՀՀ վարչապետի մեկ այլ որոշմամբ՝ 2022-2025 թվականների հարկային եկամուտների կառավարման ծրագրով նախատեսվում է ծրագրային ժամանակահատվածում չեղարկել շրջանառության հարկի համակարգի կիրառությունը: Սակայն սույն որոշմամբ ևս

փաստաթղթավորման նկատմամբ պահանջների վատթարացում չէր նախատեսվում: Այսինքն՝ շրջանառության հարկի հետ կապված քննարկումներում հիմնական մոտեցումը մշտապես եղել է այն, որ շրջանառության հարկի դրույքաչափը պետք է բարձրանա, սակայն փաստաթղթավորման նկատմամբ պահանջների փոփոխություն չպետք է լինի:

Հարցին անդրադարձավ Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը՝ նշելով, որ շրջանառության հարկը, ըստ էության դարձել է ոչ թե բիզնեսի որոշ տեսակների համար հարկային հաշվառման պարզ այլընտրանք, այլ՝ փաստացի ավելի քիչ (երբեմն անգամներով ավելի քիչ) հարկեր վճարելու «տարածք»: Այսինքն՝ ընկերությունները փաստացի երբեմն ցույց են տալիս ավելի փոքր շրջանառություն, որպեսզի ավելի քիչ հարկ վճարեն: Ներկայիս երկու համակարգերի (շրջանառության հարկ և ԱԱՀ) զուգահեռ գոյությունը անհավասար պայմաններ է ստեղծում հատկապես մեծ և փոքր արտադրողների, ինչպես նաև մեծ և փոքր մանրածախ ձեռնարկությունների միջև՝ Բարդացնելով վերջիններիս բիզնես փոխհարաբերությունները: Այսինքն՝ բազմաթիվ արդեն նշված խնդիրներից բացի, այս կարգավորումը ոչ միայն մեծ ստվերային շրջանառության աղբյուր է, այլ նաև շատ քիչ գումար է բերում բյուջե: Բացի այդ, ներկայումս գործող հարկային համակարգերի գոյությունը չի նպաստում ընկերությունների աճին: Նախարարը նշեց նաև, առկա ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ընկերությունները ծվարում են շրջանառության հարկի վերին շեմի ներքո և չեն ձգտում զարգանալ, որպեսզի տեղավորվեն այդ նիշում և չտեղափոխվեն ԱԱՀ հարկման դաշտ:

ՊԵԿ կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Մանուկյանը՝ փաստաթղթավորման նկատմամբ պահանջների վատթարացմանը վերաբերող դիտարկմանը անդրադարձավ, տեղեկացնելով, որ փոփոխության նպատակը օրենքի պահանջների կատարման ապահովումն է: Այսինքն՝ Կառավարությունը խոստացել է, որ հաշվառումը ՓՄՁ-երի մոտ կլինի պարզ, սակայն դա չի նշանակում, որ վերջիններս պետք է շուկայից գնումներ անեն առանց ծախսերը հիմնավորող փաստաթղթերի:

Վերոհիշյալ դիտարկումներին անդրադարձավ նաև ՓՄՁ համագործակցության ասոցիացիան ներկայացնող Հակոբ Ավագյանը: Մասնավորապես պարոն Ավագյանը նշեց, որ Փոխվարչապետ Տիգրան Խաչատրյանի մոտ նշվեց հատուկ հարկման

համակարգերի փոփոխության շուրջ քննարկում կազմակերպելու անհրաժեշտությունը և այդ համատեքստում շնորհակալություն հայտնեց նախարար Վահան Քերոբյանին օպերատիվ կերպով այն կազմակերպելու համար: Հակոբ Ավագյանը ներկայացրեց մի շարք փաստարկներ՝ նշելով արտոնյալ հարկային ռեժիմի պահպանման կարևորությունը ՓՄՁ-երի համար: Բացի այդ, պարոն Հակոբյանը նշեց, որ այդ փոփոխությունները ուժի մեջ մտնելու համար չափազանց կարճ ժամկետներ են նախատեսված և հաշվի առնելով նաև ՓՄՁ-երի իրազեկվածության ցածր աստիճանը, դրանց պատճառով ՓՄՁ-երը լուրջ խնդիրներ են ունենալու դրանց ընդունման պարագայում:

Հարց 2. ՎՋԵԲ Հայաստանի ներդրումային խորհրդի ավագ իրավախորհրդատու Հայկ Մալխասյանի զեկուցմամբ ներկայացվեց 24 միլիոն դրամի շեմը գերազանցող ՀԴՄ կիրառողների համար տեսանկարահանման պահանջ, խախտումները բացահայտելու նպատակով գաղտնի տեսանկարահանման և հսկիչ գնումն այլ անձի միջոցով իրականացնելու հիմքեր սահմանող իրավական ակտերի նախագծերի ընդունման մասով առկա առարկությունները: «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով նախորդ հարկային տարվա ընթացքում 24 միլիոն դրամի շեմը գերազանցող իրացման շրջանառություն ունեցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի համար սահմանվում է նոր՝ օրենքով նախատեսված հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր լինելու դեպքերում վաճառված ապրանքի կամ մատուցված ծառայության գումարը ստանալու, ստացված գումարը հսկիչ դրամարկղային մեքենա մուտքագրելու և հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոնը տրամադրելու գործողությունների տեսանկարահանման գործընթացի իրականացումը ապահովելու պարտավորություն:

Ընդ որում, ներկայացված հիմնավորումից բխում է, որ առաջարկվող փոփոխությունների իրականացումը պայմանավորված է վարչական մարմնի կողմից հսկիչ գնում իրականացնելու փաստը ապացուցելու հանգամանքով, մինչդեռ տնտեսավարողների հաշվին ապացույց ձեռք բերելու գործոնը չի բխում Էկոնոմիկայի նախարարության՝ գործարար միջավայրի բարելավման և կայուն զարգացման քաղաքականության սկզբունքներից: Բացի այդ նախագծի ընդունմամբ կնախատեսվեն

հարկային հսկողության շրջանակներում արձանագրված խախտման փաստը հաստատող հանգամանքները հիմնավորելու նպատակով հարկային հսկողություն իրականացնող պաշտոնատար անձանց տեսանկարահանող տեխնիկական միջոցներ կիրառելու իրավասություն վերապահող կանոնակարգումներ, կբարձրանա հարկային մարմնի կողմից իրականացվող հսկողական աշխատանքների արդյունավետությունը, ինչպես նաև հնարավորինս կբացառվեն ՀՀ ՊԵԿ կողմից իրականացված վարչարարության արդյունքում կայացված վարչական ակտերի վիճարկման և անվավեր ճանաչման դեպքերը:

Հարցի վերաբերյալ դիտարկումներ ներկայացրեցին Էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանը, նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը, «Քաղաքացի-հարկատու-բիզնես» ԻԿ ներկայացուցիչ Էդուարդ Բադալյանը և նիստի այլ մասնակիցներ, որոնց կողմից նշվեց, որ փոփոխության արդյունքում տնտեսավարողների համար, ըստ էության, ձևավորվում են լրացուցիչ պարտավորություններ, որոնց իրագործումը ապահովելու համար տնտեսավարողները ստիպված են լինելու կրել լրացուցիչ ֆինանսական ծանրաբեռնվածություն: Այլ կերպ ասած, հիշյալ նախագծով տնտեսավորողների համար ձևավորվում է ավելի ծախսատար միջավայր, քան առկա է ներկայիս իրավիճակում:

Հարցեր 3. Միկրոձեռնարկատիրության համակարգի գործունեության պայմանները վատթարացնող նորմերի սահմանում՝

Հարց 4. Անհատ ձեռնարկատերերի համար անալիտիկ հաշվառման պահանջի սահմանում՝

ՓՄՁ համագործակցության ասոցիացիայի ներկայացուցիչ Հակոբ Ավագյանի զեկուցմամբ ներկայացվեց հարցեր 3–րդ և 4–րդը: Մասնավորապես պարոնայք Հակոբ Ավագյանը և Էդուարդ Բադալյանը նշեցին, որ հարկային օրենսգրքի ցանկացած փոփոխություն, ընդ որում ուժի մեջ մտնելու համար ներկայումս շատ կարճ ժամանակահատված նախատեսելու կիրառվող պրակտիկայի պայմաններում, բավականին լուրջ ազդեցությունն է ունենում հատկապես փոքր և միջին ձեռնարկությունների վրա, որոնք չունեն այնքան ռեսուրս իրենց գործառնությունները հարմարեցնել նոր միջավայրին ադապտացնելու համար:

Նախարարի տեղակալ Ռաֆայել Գևորգյանը նշեց, որ այո մեծապես կարևոր է, որ ներկայումս կայացված յուրաքանչյուր որոշում հնարավորինս քիչ վարչարարական և ֆինանսական բեռ դառնա բիզնեսի համար, սակայն այդ հարցերի կարգավորումը պետք է փնտրել ոչ թե հարկային արտոնությունների տրամադրման, այլ բիզնեսի հզորացմանն ուղղված՝ աճի կարողություն, ճկունություն, դիմակայելու ունակություն և այլն, գործիքակազմի ներդրման տրամաբանությամբ: Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին նաև նիստի այլ մասնակիցները:

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՊԵԿ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻՆ ԱՌԱՋԱՐԿՎԵՑ ԴԻՏԱՐԿՎՈՂ ՆԱԽԱԳԾՈՒՄ՝

1. Նախատեսել կանոնակարգեր, որոնք միտված կլինեն կանխելու հարկային մարմինների կողմից հարկային ստուգումների տեսաֆիքսումից կամայական մերժման հնարավորությունը, ինչպես նաև սահմանել, որ հարկային ստուգումների տեսանկարահանում կարող են իրականացնել միայն լիազորված հարկային ծառայության աշխատակիցները, բայց ոչ հարկային մարմնի կողմից ներգրավված երրորդ անձինք:
2. Նախատեսել կանոնակարգեր, որոնցով կհստակեցվեն հարկային ստուգումների ժամանակ փաստաթղթերի և իրերի առգրավման ընթացակարգերն ու հետևանքները, ներառյալ համապատասխան կարգավորումները՝ բացառելով գործի հետ կապ չունեցող փաստաթղթերի և իրերի առգրավման հնարավորությունը:
3. Հարկային օրենսգրքի նոր կարգավորումների համար նախատեսել ուժի մեջ մտնելու համար առավել երկար ժամանակահատված՝ բիզնեսին տալով ավելի երկար ժամանակ դրանց ադապտացվելու համար:

Նիստը նախագահող
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ
ԵՆԹԱԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՎԱՀԱՆ ՔԵՐՈԲՅԱՆ

X _____

_____

(ստորագրություն)

Արձանագրությունը կազմեց՝
ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՁԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՊՄԵ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ ՀՌԻՓՍԻՄԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ